ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Մոտիվացիայի ձևավորումը հարցադրումների մեթոդի միջոցով

ԱՆՑԱԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Ռիտա Պետրոսյան

ԴՊՐՈՑ՝ Սոթքի միջն. դպրոց

2023թ.
ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3
Գրական ակնարկ_____5
Փորձարարական հետազոտություն_____9
Խմբի նկարագիր_____9
Հետազոտության ընթացք_____10
Փորձարարական դաս 1_____10
Փորձարարական դաս 2_____10
Տվյալների մշակում և վերլուծություն_____15
Եզրակացություն_____17
Օգրագործված գրականության ցանկ_____18
Հավելված
Դասապլան 1
Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քրիստին Չինը իր աշխատություններից մեկում նշում է, որ իրական ուսուցում ապահովելու համար պետք է օգտագործել մարդու միտքը և ոչ թե հիշողությունը: Ըստ նրա՝ դա բացահայտումների փուլ է, որտեղ հիմնական դերում աշակերտն է և ոչ ուսուցիչը: / Ղ. Ա, 179/

Մոտիվացիայի մասին մանկավարժական գրականություն ուսումնասիրելիս կարդացի , որ հարցեր տալու և հարցերին պատասխանելու կարողությունն ուսումնառության մեջ առանցքային և կարևոր տեղ է գրավում: Այս մեթոդը կիրառվում է սովորողների գիտելիքները գնահատելու, ուսուցանվող նյութն ավելի խորն ըմբռնելու, քննադատական մտածողություն զարգացնելու, աշակերտների ներգրավվածության աստիճանը բարձրացնելու մոտիվացիան խթանելու համար: Ինձ մոտ հարց առաջացավ , թե ինչ տարբերություն կարող է ունենալ հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումը, պատմելու միջոցով մոտիվացիայի ձևավորումից: Ինչպես կարող է հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումը ազդել ուսուցման որակի բարելավման վրա, ուսուցանվող նյութի ավելի խորը մտապահմանն հետագայում վերարտադրման համար համար:

Հարցադրումների մոտեցման մեջ էական առավելություն կա, և դա այն է, որ այսպիսի դասի ընթացքում ձեռք բերված գիտելիքները «փոխանցելի» են:

Ելնելով իմ առջև դրված խնդիրներից՝ որոշեցի կատարել հետազոտություն և պարզել՝ ինչպես կարող է Հարցադրման մեթոդով ձևավորել մոտիվացիա տարրական դասարաններում սովորող աշակերտների մոտ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ_Տարրական դասարանների ուսուցման գործընթացը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿ_Ուսուցանվող թեմայի վերաբերյալ ձևավորել մոտիվացի և նպաստել ուսումնական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ_ՈՒսումնասիրել Հարցադրումների մեթոդի արդյունավետությունը մոտիվացիայի ձևավորման գործում:

--Հիմնավորել մեթոդի արդյունավետությունը ուսուցման գործընթացի ձևավորման գործում:

Հետազոտությունը անցկացրել եմ 3-րդ դասարանում, որտեղ սովորում են 14 աշակերտ:Հետազոտություն անցկացնելու համար կիրառել եմ հարցադրման մեթոդը, հայտորոշիչ թեստեր: Ուսումնասիրել եմ գիտամանակավարժական գրականություն և հետազոտվող թեմային վերաբերվող կատարված հետազոտական աշխատանքները և կատարել եմ վերլուծություն:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հանրակրթական դպրոցի և ուսուցչի առջև այսօր բազմաթիվ խնդիրներ են դրված: Անհրաժեշտ է փնտրել և գտնել ուղիներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ դարձնելուն;
Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություն, որոնք կմոտիվացնեն աշակերտին, ուսուցանվող նյութը կդարձնեն հետաքրքիր, հասկանալի և մտապահվող:
Ես ենթադրում եմ , որ այդպիսի ռազմավարությունից մեկը հարցերի միջոցով մոտիվացիայի ձևավորումն է:
Հետազոտության այս հատվածում փորձ կարվի գիտամանկավարժական գրականություն ուսումնասիրել, որոնք վերաբերվում են հարցադրումների մեթոդին և մոտիվացիային:
Ուսումնասիրել եմ ,
Ջեոֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» , Գլուխ 14, Հարցադրումների մեթոդի առավելությունները», « Ջեֆ Փեթթի , Գլուխ 5, Մոտիվացիա » հետազոտական աշխատանքները,
«Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյայի հոդվածը , «Հարցադրման մեթոդ, Հեղինակ՝ Բաբերցյան Լարիսա» հոդվածը,

ՈՒսումնասիրված աշխատանքներից առանձնացրել եմ մտքեր և հատվածներ, որոք ինձ կօգնեին իմ հետազոտական աշխատանքը ճիշտ և նպատակային դարձնել: Դրանցից մի քանիսը գրի եմ առել:Երբ հարցադրումները կիրառում ենք որպես դասավանդման մեթոդ, ի հայտ է գալիս մեկ էական առավելություն: Աշակերտները պետք է իմանան, որ ուսումնառության մեջ հաջողություն են գրանցում: Ոչինչ այնքան չի մոտիվացնում, որքան աշակերտի բավարարվածության զգացումը, երբ նա հարցին ճիշտ է պատասխանում և անմիջապես արժանանում ուսուցչի ջերմ գովասանքին:

Հետևաբար, ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝
• Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը

• Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա

• ստեղծում է փոխանցելի գիտելիք

• տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ

• դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին

• աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է

• վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)

• մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում

• անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը

• կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար

• թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը

• խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Թերություններն այն են, որ հարցադրումների մոտեցումը.
• Կարող է ժամանակատար լինել

• դժվարեցնում է խմբում բոլոր աշակերտների ներգրավվածությունը

• հեշտ կիրառվող ձև չէ ուսուցչի համար: /5, Ջ. Փ.Գ. 14/

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող, «փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի:

Երեխաների մասնակցությունը և ակտիվ ներգրավումն ապահովելու, նրանց մտածողության խթանման և սովորելու հմտությունների զարգացման համար չափազանց կարևոր դեր ունեն առաջադրվող հարցերն ու հարցադրումները: Հարցերը կամ հարցադրումները երեխաների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են: Հարցերը պետք է լինեն՝

— հստակ,
— նպատակաուղղված,
— հակիրճ,
— տեղին,
— երեխաների մակարդակին համապատասխան,
— տրամաբանական հաջորդականությամբ,
— մտածելու տեղիք տվող:/Ա. Ղ. ,165 /

Մանկավարժական գրականության մեջ տարբերվում են մի քանի փուլեր

1. բաց
2. փակ

3. հուշող
4. ենթատեքստով
5. հետադարձ
6. ուղղորդող/Բ. Լ, 2/

ՈՒսուցիչը պետք է՝

- Համոզվե՛ի, որ երեխաները հասկացել են հարցը:
- Հարցը ձևակերպե՛ի հակիրճ:
- Հարցը ձևակերպեիք հստակ:
- Կշռադատե՛ի հարցի բարդությունը և երեխաներից պատասխաններ ստանալու հնարավորությունը:
- Չպե՛տք է տա՛ անորոշ հարցեր:
- Չպե՛տք է ուղղորդեի երեխաներին դեպի Ձեր նախընտրած պատասխանը:
- Չպե՛տք է պատասխանեի հարցերին:/Բ. Լ., 4/

Քանի վոր իմ նպատակն է Հարցադրման մեթոդով ձևավորել մոտիվացիա, անդրադրձել եմ նաև մոտիվացիային վերաբերվող հատվածներին:

Շարժառիթները կարող են լինել երկարաժամկետ կամ կարճաժամկետ:: Ընդհանուր առմամբ կարճաժամկետ շարժառիթներն ազդեցիկ են առավել երիտասարդ սովորողների համար. մեծահասակը հաճույքով կաղնու ծառ կարող է տնկել, սակայն 16 տարեկանների համբերությունը չի հերիքում անգամ կանաչի աճեցնելու համար:/Ջ. Փ.,Գ.5, 4/

Գովեստը կամ խրախուսումը, որին արժանանում են հաջողության հասնելով, ուսումնառության գործընթացի շարժիչ ուժն է: Հետևաբար՝

• ուսուցիչները պետք է համոզվեն, որ սովորողները հստակ գիտեն՝ ինչ է իրենցից սպասվում և ինչպես անել դա: Նրանք գիտեն նաև, որ անհրաժեշտության դեպքում կարող են օգնություն ստանալ:

• Որոշ առաջադրանքներ պետք է լինեն պարզ, որոշ շտկումներից հետո արագ իրագործելի, որպեսզի բոլոր սովորողները կարողանան որոշակի հաջողության հասնել: Իսկ մյուս առաջադրանքները կարող են ավելի աշխատատար լինել:

• Ուսումնառության մեջ գրանցած հաջողություններն անպայման գովեստի խոսքերի կամ այլ հավանության պետք է արժանացնել՝ չանտեսելով անգամ ամենասովորական հաջողությունը, օրինակ՝ առաջադրանքը քիչ թե շատ հաջող կերպով ավարտելը:

Խրախուսումը չպետք է իրեն սպասել տա: Վերոնշյալ երեք կետերը հիմնաքարային են մոտիվացիայի համար: Դրանք իսկապես շատ լուրջ քննության են արժանի: Զգուշացե'ք բավարարվածության զգացումից առաջացած թակարդից: Եթե առավելագույն հաջողության հասնելու հնարավորություն տալիս եք ձեր աշակերտների մեծամասնությանը. հաջողությունը պետք է սովորական լինի բոլոր

սովորողների համար, հակառակ դեպքում ոմանք կկորցնեն սեփական ուժերի հանդեպ հավատը, որի շնորհիվ իրականանում է ուսումնառությունը: Սովորում և հաջողության են հասնում նրանք, ովքեր հավատում են իրենց ուժերին: /Ջ. Փ.,Գ.5, 8/

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին տարրական դասարանների ուսուցիչների առջև բացվում է գործունեության լայն դաշտ՝ ստեղծագործել և որոնել ուսուցման իդիալական տարբերակ: Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահապանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները:

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամի կազմակերպում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հարցադրման մեթոդի միջոցով աշակերտների մոտ մոտիվացիայի ձևավորման արդյունավետությունը:

Համաձայն առաջադրված նպատակի և խնդիրների՝ կազմել եմ ուսումնասիրության ռազմավարություն:

Տեսական վերլուծության վրա հիմնվելով՝ օգտագործել եմ հարցադրումների մեթոդը և հայտորոշիչ թեստեր, որպես հետազոտության հիմնական գործիքներ: Նպատակս է աշակերտների մոտ ձևավորել կարճաժամկետ մոտիվացիա, որպեսզի ուսուցանվող նյութը հեշտ և ճիշտ յուրացվի:

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Հետազոտության համար ընտրել եմ իմ դասավանդած Սոթքի միջակարգ դպրոցի երրորդ դասարանը, որտեղ սովորում են 14 աշակերտներ, որոնցից 5-ը աղջիկ,իսկ 9-ը տղա:Առաջադիմություն բարձր է:Շատ համախմբված դասարան է:Աշակերտները չափազանց ակտիվ են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հետազոտությունը պետք է անցկացնեմ երկու դասաժամերի ընթացքում: Նախատեսել եմ, որ առաջին դասաժամի ընթացքում նոր դասը կհաղորդեմ պատմելու միջոցով, իսկ անդրադարձ փուլում կբաժանեմ հայտորոշիչ թեստեր և կստուգեմ աշակերտների կողմից դասնյութի յուրացվածության աստիճանը:

Մոտիվացիան թե՛ հմուտ, թե՛ սկսնակ ուսուցիչների կողմից ընկալվում ՝ իբրև արդյունավետ ուսումնառության նախապայման և շատ ուսուցիչների համար մեծագույն մարտահրավեր է սովորողների մեջ սովորելու ցանկություն սերմանելը: Եթե սովորողները չցանկանան սովորել, նրանց ուսումնառության արդյունավետությունն այնքան ցածր կլինի, որ հնարավոր է նրանք ոչինչ էլ չսովորեն: Եթե գիտենք՝ ինչպես կարող ենք մոտիվացնել սովորողներին, մենք կարող ենք հսկայական թափ հաղորդել նրանց սովորելու գործընթացին:

Փորձարարական դաս 1

Ահա այդ թեստերը

1. Ի՞նչ է խաղողը:
2. Ի՞նչ կարող ենք պատրաստել նրանից:
3. Ի՞նչ պայմաններում է սիրում աճել:
4. Ուրիշ ի՞նչ գիտես խաղողի մասին:

Երկրորդ դասաժամի ընթացքում նոր դասը կհաղորդեմ՝ կիրառելով Հարցադրման մեթոդը : Հարցադրումը կկատարեմ ելնելով աշակերտների առօրյա գիտելիքներից:

Հարցերը կտամ պարզից բարդ սկզբունքով: Սխալ պատասխանները չեմ ուղղի , այլ հարցադրումները կփոխեմ, որպեսզի աշակերտները գտնեն ճիշտ պատասխանը:
Դասի անդրադարձ փուլում կհանձնարարեմ հայտորոշիչ թեստեր և կստուգեմ յուրացրած գիտելիքների մակարդակը:

Փորձարարական դաս 2

1. Ի՞նչ է նուռը:
2. Ի՞նչ կարող ենք պատրաստել նրանից :
3. Ի՞նչ պայմաններում է սիրում աճել:
4. Ուրիշ ի՞նչ գիտես նռան մասին:

Թեստերի արդյունքները կստուգեմ և կգրանցեմ նախապես կազմած աղյուսյակներում : Վերջում կհամեմատեմ աղյուսյակները և կկազմեմ դիագրամ որտեղ կարտացոլվի մոտիվացիայի ձևավորման աստիճանը ըստ կիրառած մեթոդների, և աշակերտների տրված պատասխանների:

Առաջին դաս

Ներկա աշակերտների թիվը	+50% տրված դրական պատասխաններ	-50% տրված դրական պատասխաններ	0% տրված դրական պատասխաններ
14			

Երկրորդ դաս

Ներկա աշակերտների թիվը	+50% տրված դրական պատասխաններ	-50% տրված դրական պատասխաններ	0% տրված դրական պատասխաններ
14			

Աղյուսյակների համեմատման միջոցով կպարզեմ աշակերտների դասին մասնակցելու ակտիվության աստիճանը:

Իմ առջև դրեցի խնդիր ուսումնասիրվող թեման ներկայացնել առաջի դասի ժամանակ միայն պատմելու միջոցով:

Դասարան-III

Դասի թեմա-<<Վազ-խաղողենի՝ Հայկ խաչատրյան, Իմաստունի օրատետրից՝ <<Խաղող>>
/Հեղինակներ՝Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան/

Դասի տեսակը՝ նոր նյութի հաղորդման դաս:Դասը կազմակերպվում է ԽԻԿ

համակարգով:Նպատակները՝

1. Գիտելիքների համակարգ
   Աշակերտները պետք է
   իմանան՝
   - նոր բառեր և իմաստներ՝վազ,ողկույզ, ճաշակել, խաղողահյութ, խենթանալ.
   - ողկույզ, հյութեղ, ձիգ, ճմռթվել, ծուռումուռ բառերի ուղղագրությունները.
   - նոր տեղեկություններ մրգի մասին

- մրգերը բնութագրող ածականներ:

2. Կարողությունները և հմտությունները Աշակերտը պետք է կարողանա՝
   - հասկանալով ընթերցել բնագիրը.
   - տրված թեմայով նկարագրական բնույթի խոսք կառուցել.
   - ձևակերպել ավանդազրույցի հիմնական միտքը
   - տարբերել ավանդազրույցը պատմությունից,
   - իր կարծիքը արտահայտի վերնագրի մասին և նոր վերնագիր առաջարկի:
3. Արժեքային համակարգ Աշակերտը պետք է՝
   - վերաբերմունք արտահայտի ազգային արժեքների նկատմամբ
   - գիտակցի մրգի օգտակարությունը և այն որպես դեղամիջոց օգտագործվելու կարողությունը:
   - հասկանա ոգելից խմիչքների չարաշահման բացասական

հետևանքները: Ուսումնառության ակնկալվող արդյունքները՝ ըստ

չափորոշչային մակարդակների

I մակարադակ

1.Բարձրաձայն կընթերցեն ավանդազրույցը և կբացատրեն նորածանոթ բառերն ուարտահայտությունները:

I I մակարադակ

2.1 Հատվածաբար կընթերցեն ավանդազրույցը՝ մեկնաբանելով առանձին հատվածների բովանդակությունը:

2.2 Ավանդազրույցը կընթերցեն տարբեր հույզերի արտահայտմամբ և ամեն անգամ կմեկնաբանեն՝ ինչը փոխվեց ընթերցանության մեջ:

2.3 Ստեղծագործական աշխատանքի միջոցով կարտահայտեն իրենց վերաբերմունքը ազգային արժեքների՝ քանդակների նկատմամբ:

2.4 Տեքստից կառանձնացնեն միրգը բնութագրող ածականները:

I I I մակարադակ

3.1 Արտահայտիչ կընթերցեն բանաստեղծությունը

3.2 Կճանաչեն տեքստի հիմնական գաղափարը:
Գնահատում՝ Կգնահատվեն հայտորոշիչ թեստի միջոցով:

Մեթոդներ՝ Կօգտագործեմ՝ Մտագրոհի մեթոդը, Քառաբաժանի մեթոդը:

Ռեսուրսներ՝ Կօգտագործեմ Հայտորոշիչ թեստ՝ ԿԱՊԿՈՒ աշակերտի համար, Քառաբաժանիցուցապաստառ,խաղող:

- ❖ ԽԹԱՆՈՒՄ

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում խաղող բառի առաջացրած զուգորդումները:գրատախտակին պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկերը:

- ❖ Իմաստի ընկալում

Կպատմեմ խաղողի մասին: Ավանդազրույցի և խաղողի մասին

նյութի ընթերցում:Բնագրային աշխատանք՝

- բառային աշխատանք,
- տեքստային աշխատանք:

Ավանդազրույցում նկարագրված դեպքերը ներկայացնել հաջերդայնացման շղթայով

Դասի առաջին փուլում պատմեցի խաղողի մասին, այնուհետև կարդացի դասը, կատարեցին բառային աշխատանք: Անրադարձ փուլում հանձնարարեցի հայտորոշիչ թեստ:
Դասի անրադարձ փուլում հանձարարեցի հետևյալ Հայտորոշիչ թեստը:

1. Ի՞նչ է խաղողը:
2. Ի՞նչ կարող ենք պատրաստել նրանից:
3. Ի՞նչ պայմաններում է սիրում աճել:
4. Ուրիշ ի՞նչ գիտես խաղողի մասին:

Հաշվի առնելով այն փաստը, որ շարժառիթները կարող են լինել երկարաժամկետ կամ կարճաժամկետ, փորձեցի երկրորդ դասի ժամանակ ձևավորել կարճաժամկետ մոտիվացիա՝ ուսուցանվող նյութը լավ յուրացնելու համար: Դասի Իմաստի ընկալման փուլում կիրառեցի հարցադրումների մեթոդը: Քանի որ ապրում ենք գյուղում, երեխաները տեղյակ են հողագործությունից:Իմ հարցադրումները կապեցի իրենց առօրյային, որպեսզի ավելի մոտիվացնեմ:Ցուցադրեցի նուռ և կատարեցի հարցադրումներ:

Ի՞նչ է սա:

Աշակերտները միանգամից ակտիվացան, քանի որ բոլորն էլ գիտեին պատասխանը: Տրվեց հաջորդ հարցը:

Մի՞րգ է, թե՞ բանջարեղեն:

Ի՞նչ կարող ենք ստանալ այս մրգից:

Պատասխանելու ընթացքում հիշեցին, թե մայրիկները և տատիկները ինչեր են պատրաստում:

Հիշեցինք՝ ինչեր էին ստանում խաղողից: Անցկացրեցինք համեմատություն: Հիշեցին, որխաղողի վազերի հետ միասին հողով ծածկում են նաև նռնենին, որպեսզի չցրտահարվի:

Ի՞նչ պայմաններում է սիրում աճել հարցի պատասխանը հեշտ և ճիշտ

գտան:Հարցադրման մեթոդի կիրառումից հետո ընթերցեցի դասը:

Համեմատեցինք աշակերտների տրված պատասխանները և դասնյությում ներկայացված տեղեկությունները: Առանձնացրեցինք այն տողերը, որոնք նոր տեղեկություններ են տրամադրում նռան մասին / ամենաուշն է ծաղկում, ունի 5մ բարձրություն և այլն/:/ ՀավելվածII դաս/

Անդրադարձ փուլում Հայտորոշիչ թեստ տվեցի և ստուգեցի յուրացրած գիտելիքների մակարդակը:

Ահա թեստերը՝

- Ի՞նչ է նուռը:
- Ի՞նչ կարող ենք պատրաստել նրանից:
- Ի՞նչ պայմաններում է սիրում աճել:
- Ուրիշ ի՞նչ գիտես նռան մասին:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամեր կազմակերպել:Հետևաբար, կրտսեր դպրոցականի ուսուցման հաջողության գրավականը կայուն ուսումնական մոտիվացիայի առկայությունն է: Հիմնվելով այս հանգամանքի վրա՝ անցկացրեցի հետազոտություն 2 դասաժամերի ընթացքում:

Առաջին դասաժամին չկիրառեցի մոտիվացնող ոչ մի մեթոդ: Դասը ներկայացրի պատմելու միջոցով: Դասի վերջում տվեցի Հայտորոշիչ թեստ: ստուգեցի արդյունքները և գրանցեցի աղյուսակում:

Առաջին դաս

Ներկա աշակերտների թիվը	+50% տրված դրական պատասխաններ	-50% տրված դրական պատասխաններ	0% տրված դրական պատասխաններ
14	4	5	6

Երկրոդ դասի ընթացքում կիրառեցի Հարցադրումների մեթոդը: Անդրադարձ փուլում նորից հանձնարարեցի գրել հայտորոշիչ թեստ:

Երկրորդ դաս

Ներկա աշակերտների թիվը	+50% տրված դրական պատասխաններ	-50% տրված դրական պատասխաններ	0% տրված դրական պատասխաններ
14	10	3	0

Համեմատեցի երկու դասերի ընթացքում լրացված աղյուսյակները և կազմեցի գրաֆիկ:





Համեմատելով գրաֆիկները՝ պարզ երևում է երկրորդ դասի ժամանակ մոտիվացիայի առկայությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչը պետք է դիմի ոչ այնքան աշակերտների հիշողությանը, որքան նրանց մտքին, որպեսզի հասնի ըմբռմանը, ոչ թե պարզապես անգիր անելուն:

Ֆեդոր Իվանովիչ Յանկովիչ դե Մարիևո

Այսպիսով ժամանակակից հասարակությանը անհրաժեշտ է անձ, որն ունակ է ինքնակատարելագործման, ինքնազարգացման : Հասարակության այս կարիքը չի կարող բավարարվել տարբեր առարկաների ուսումնասիրության ընթացքում դպրոցականների շրջանում մտավոր և ճանաչողական մոտիվացիայի բացակայությամբ, հետևաբար աշակերտների մոտիվացիայի ձևավորման խնդիրը ներկայումս ամենաարդիականն է մանկավարժական տեսության և պրակտիկայի մեջ:

Իմ կողմից կատարված տեսական ուսումնասիրություններին վերլուծությունների, հետազոտությունների արդյունքում հանգեցի հետևյալ եզրակացությունների.

- Տարրական դասարաններում առաջնային համարել ուսուցանվող նյութի նկատմամբ կարճաժամկետ մոտիվացիայի ձևավորումը:
- Այն դասաժամերը, որոնց ընթացքում աշակերտի մոտ ձևավորվում է մոտիվացիա ուսուցանվող նյութի նկատմամբ, աշակերտները հաճույքով են մասնակցում և մեծ ակտիվություն են ցուցաբերում:
- Յուրաքանչյուր մեթոդ ունի իր բնորոշ առանձնահատկությունները, որոնք իրենց հերթին կարող են մոտիվացնել աշակերտին:
- Հարցադրումների մեթոդի ճիշտ կիրառման դեպքում կարող է աշակերտների մոտ ձևավորվել մոտիվացիա:
- Ուսուցանվող նյութի նկատմամբ մոտիվացիա ձևավորելու արդյունքում բարձրանում է նյութի մտապահման տոկոսը:

Այսպիսով՝ուսումնական մոտիվացիայի ձևավորումից է կախված ուսուցման գործընթացում մեր և աշակերտների ունեցած հաջողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ջեֆ Փեթթի «Դասավանդումն այսօր» , Գլուխ 14, Հարցադրումների մեթոդի առավելությունները» հետազոտական աշխատանք

2.Ջեֆ Փեթթի , Գլուխ 5, «Մոտիվացիա » հետազոտական աշխատանք

3.«Հարցադրման մեթոդները և ուսուցման արդյունավետության բարձրացումը» Ղուկասյան Ասյա, հոդված

4.https://lib.armedu.am/Հարցադրման մեթոդ , Բաբերցյան Լարիսա

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան
Ուսուցչուհի՝ Ռիտա Պետրոսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	05.04.2023 թ.	Կիսամյակ	2-րդ	Դասարան	3-րդ
Թեմա՝	<<Նուռ>>՝ Գուրգեն Գաբրիելյան, Իմաստունի օրատետրից՝ <<Նուռ>>						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք,գրենական պիտույքներ,հարցաթերթիկներ,նուռ.						
Դասինպատակը՝	Գիտելիքների համակարգ Աշակերտները պետք է իմանան՝ • նոր բառեր և իմաստներ՝քանդակ, երկրեերկիր, ցաքուցրիվ. • ծաղկել, երկրեերկիր, միրգ, ցաքուցրիվ բառերի ուղղագրությունները. • նոր տեղեկություններ մրգի մասին • մրգերը բնութագրող ածականներ: 5. Կարողությունները և հմտությունները Աշակերտը պետք է կարողան՝ • հասկանալով ընթերցել բնագիրը. • տրված թեմայով նկարագրական բնույթի խոսք կառուցել. • ձևակերպել բանաստեղծության հիմնական միտքը • տարբերել բանաստեղծությունը պատմությունից, • իր կարծիքը արտահայտի վերնագրի մասին և նոր վերնագիր առաջարկի:						

Ուսուցմանփաստեր,որոնքկփաստեն,որուսուցումըտեղիունեցավ

Վերջնարդյունքները	1. Բարձրաձայն կընթերցեն բանաստեղծությունը և կբացատրեն նորածանոթ բառերն ու արտահայտությունները: Հատվածաբար կընթերցեն բանաստեղծությունը՝ մեկնաբանելով առանձին հատվածների բովանդակությունը: Բանաստեղծությունը կընթերցեն տարբեր հույզերի արտահայտմամբ և ամեն անգամ կմեկնաբանեն՝ ինչը փոխվեց ընթերցանության մեջ: Ստեղծագործական աշխատանքի միջոցով կարտահայտեն իրենց վերաբերմունքը ազգային արժեքների՝ քանդակների նկատմամբ: Տեքստից կառանձնացնեն միրգը բնութագրող ածականները: III մակարադակ Արտահայտիչ կընթերցեն բանաստեղծությունը Կհորինեն փոքրիկ պատմություն՝նռան մասին:

		Կճանաչեն տեքստի հիմնական գաղափարը		
Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնականգործունեություն Ուսուցիչ	Ուսումնականգործունեություն Աշակերտներ	Կիրառվողմեթոդները
5-10ր 15-20ր	Սկիզբ Ընթացք	Բարևում է աշակերտներին, Անում է ներկա-բացակա:Ստուգում է տնային առաջադրանքները: Ցուցադրել նուռ և պարզել, թե երեխաները ի՞նչ գիտեն նռան մասին: Հարցերի միջոցովփորձել աշակերտների մոտ ձևավորել կարճաժամկետ մոտիվացիա: Աշակերտների տրված պատասխանները չհամարել սխալ, այլ յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում՝ պարզեցնել հարցը և աշակերտին ուղղորդել դեպի ճիշտ պատասխանը:	Բարևում են ուսուցչուհուն: Ներկայացնում տնային առաջադրանքները: Ուկնդրում են ուսուցչուհուն, Պատասխանում հարցերին: Մասնակցում են քննարկմանը: Ընթերցում են բնագիրը և քննարկում այն: Նորից հարցերի միջոցով քննարկում են ընթերցածը:	Մեթոդներ՝Կօգտագործեմ՝Հարցադրումներիմեթոդը, Պրիզմամեթոդը, Քառաբաժանի մեթոդը:

		Հարցերը կապել աշակերտների առօրյայի հետ: Բանաստեղծության ընթերցում / աշակերտների և ուսուցչի կողմից/: Բանաստեղծության յուրաքանչյուր քառատողի իմաստի բացահայտում : Բառային աշխատանք բանաստեղծության բառերի շուրջ:/ Բացատրել անհասկանալի բառերը, կազմել նախադասություններ այդ բառերով: Ուշադրություն դարձնել ուղղագրական արժեք ունեցող բառերի գրությանը:/	Կատարում են բառային աշխատանք և կազմում նախադասություններ:	
7-10ր	Ավարտ	Երկու դասանյութի ընթերցումից հետո նորից կատարել հարցադրումներ և համեմատել նախկինում ունեցած գիտելիքները նոր սովորած	Հարցերի միջոցով ամփոփում են դասը:	

		գիտելիքների հետ: Հայտորոշիչ թեստի միջոցով ստուգել նոր ուսուցանվող նյութից աշակերտների, ձեռք բերած գիտելիքները: Ամփոփում Քառաբաժան մեթոդով ամփոփել դասը:		
Գնահատում Տնային աշխատանք 3-5ր		Թվանշանային գնահատում Գրել շարադրություն՝ <<Հայկական խորհրդանիշները>> թեմայով		

Դասապլան 2
Ուսուցչուհի՝

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	09.04.2023.	Կիսամյակ	2-րդ	Դասարան	3-րդ
Թեմա՝	-<<Վազ-խաղողենի՝Հայկ խաչատրյան, Իմաստունի օրատետրից՝ <<Խաղող>> /Հեղինակներ՝Դավիթ Գյուրջինյան, Նարինե Հեքեքյան/						
Օգտագործվող նյութեր							
Դասինպատակը՝	Գիտելիքների համակարգ Աշակերտները պետք է իմանան՝ • նոր բառերև իմաստներ՝վազ,ողկույզ, ճաշակել, խաղողահյութ, խենթանալ. • ողկույզ, հյութեղ, ձիգ, ճմռթվել, ծուռումուռ բառերի ուղղագրությունները. • նոր տեղեկություններ մրգի մասին • մրգերը բնութագրող ածականներ: Կարողությունները և հմտությունները						

Ուսուցմանփաստեր,որոնքկփաստեն,որուսուցումըտեղիունեցավ

Վերջնարդյունքները	Կարողությունները և հմտությունները Աշակերտը պետք է կարողան՝ • հասկանալով ընթերցել բնագիրը. • տրված թեմայով նկարագրական բնույթի խոսք կառուցել. • ձևակերպել ավանդազրույցի հիմնական միտքը • տարբերել ավանդազրույցը պատմությունից, • իր կարծիքը արտահայտի վերնագրի մասին և նոր վերնագիր առաջարկի:

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասիփուլերը	Ուսումնականգործունեություն Ուսուցիչ	Ուսումնականգործունեություն Աշակերտներ	Կիրառվողմեթոդները

5-10ր	Սկիզբ	Բարևում է աշակերտներին, Անում է ներկա-բացակա:Ստուգում է տնային առաջադրանքները:	Բարևում են ուսուցչուհուն: Ներկայացնում տնային առաջադրանքները:	Մեթոդներ՝ Կօգտագործեմ՝ Մտագրոհի մեթոդը, Քառաբաժանի մեթոդը:
15-20ր	Ընթացք	Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում խաղող բառի առաջացրած զուգորդումները: գրատախտակին պատկերել աշակերտների նշած հասկացությունները ներկայացնող գծապատկերը: Կպատմեմ խաղողի մասին: Ավանդազրույցի և խաղողի մասին նյութի ընթերցում: Բնագրային աշխատանք՝ • բառային աշխատանք, • տեքստային աշխատանք: Ավանդազրույցում նկարագրված դեպքերը ներկայացնել հաջերդայնացմա	Ուկնդրում են ուսուցչուհուն, Պատասխանում հարցերին: Մասնակցում են քննարկմանը: Ընթերցում են բնագիրը և քննարկում այն: Նորից հարցերի միջոցով քննարկում են ընթերցածը:	

7-10ր	Ավարտ	ն շղթայով: Հայտորոշիչ թեստի միջոցով պարզել աշակերտների ստացած գիտելիքները ուսուցանվող թեմայից; Դասն ամփոփել Քառաբաժան մեթոդով Ի՞նչ ձայներ էի լսում Ի՞նչ էի տեսնում Ի՞նչ էի մտածում Ի՞նչ նոր վերնագիր կդներ	Կպատասխանեն ուսուցչուհու հարցերին	
Գնահատում Տնայինաշխատանք 3-5ր		Թվանշանային գնահատում Բառերի գանձատուփից գրել առաջադրանք 2-րդը և 4-րդը		